

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/4-2**

ք. Երևան

« 17 » օգոստոսի 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Գ. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշիվներով նախատեսված ՀՀ Կոտայքի մարզի գ. Ջրառատի և գ. Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշիվի համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերն ուժի մեջ մտնելուց հետո և յուրաքանչյուր չափաբաժնի համար աշխատանքների ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 420 օրացուցային օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 3):

1.4 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում

1.4.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքման հաջորդող օրերի քանակը,

1.4.2 հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից համապատասխան եզրակացության դեպքում՝ եզրակացության մեջ նշված օրերի քանակը:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառու ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

բ) Կապալառու խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին.

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Ապահովել պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2) ներկայացված կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի

19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝
ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,
բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1238 822 174 (մեկ միլիարդ երկու հարյուր երեսունույթ միլիոն ութ հարյուր քսաներկու հազար մեկ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ, որից՝ 206 470 362.33 (երկու հարյուր վեց միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար երեք հարյուր վաթսուներկու դրամ երեսուներեք լումա) ՀՀ դրամը ԱԱՀ-ն, որից՝

- ՀՀ Կոտայքի մարզի գ. Ջրառատի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքներ - 648 822 174 (վեց հարյուր քառասունույթ միլիոն ութ հարյուր քսաներկու հազար մեկ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ, որից՝ 108 137 029 (մեկ հարյուր ութ միլիոն մեկ հարյուր երեսույթ հազար քսանինը) ՀՀ դրամը ԱԱՀ-ն,

- ՀՀ Կոտայքի մարզի գ. Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքներ - 590 000 000 (հինգ հարյուր ինսուն միլիոն), որից՝ 98 333 333.33 (ինսունույթ միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա) ՀՀ դրամը ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պատվիրատուն Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարի չափը և տրամադրման ժամկետները որոշվում են Կապալառուի կողմից կատարման ենթակա աշխատանքների ու ձեռքբերվող նյութերի (այդ թվում սարքերի) ժամկետների վերաբերյալ Պատվիրատուին ներկայացվող գրավոր տեղեկատվության (հիմնավորման) առկայության դեպքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով. Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

¹ Վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախադրվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հենք միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված ընդհանուր դեպքում աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը (420 օրացուցային օր) կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 7 (յոթ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ

փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝



ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011724
ՀՎՀՀ 02565827

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

«Բաղրամյան» ԲԲԸ
ք. Երևան, Ուլնեցու 31/2
«Հայթիզնեսթանկ» ՓԲԸ
Հ/Հ 115004673956
ՀՎՀՀ 04600132

Գլխավոր քարտուղար՝

Տնօրեն՝



Հավելված N 1
 << 17 >> օգոստոսի 2020թ. կնքված
 N ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/4-2 պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
 ՀՀ Կոտայքի մարզի գ. Ջրառատի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման
 աշխատանքների կատարման

Գ/Գ	Աշխատանքների անվանումը	Չափման միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամերը
1	2	3	4	5	6
	1.1. Համաշինարարական աշխատանքներ				
	Հողային աշխատանքներ				
1	III-րդ կարգի գրունտի մշակում փոստորակում 0.5 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով կողիցք	խմ	2272	550.0	1,249,600.0
2	III-րդ կարգի գրունտի մշակում խրամուղիներում 0.5 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով կողիցք	խմ	510	500.0	255,000.0
3	Փոստրակի և խրամուղիների հատակի և կողերի վերջնական հարթեցում ձեռքով	խմ	60	1,500.0	90,000.0
4	Գրունտի քանդում պահուստում 0.6մ3 շերտի տարողությամբ էքսկավատորով, բարձելով ավտոմեքենաների վրա	խմ	372	1,000.0	372,000.0
5	Նույնի տեղափոխում 3կմ հեռավորությունից (լիցքի համար)	խմ	372	300.0	111,600.0
6	Գրունտի ետլիցք հատակների տակ բուրդեղերով	խմ	3014	300.0	904,200.0
7	Գրունտի աստիճանաբար տոփանում օդաճնշական ձեռքի տոփանիչով	խմ	3014	300.0	904,200.0
8	Գրունտի ետլիցք հիմքերի ծոց ձեռքով, տոփանումով	խմ	200	800.0	160,000.0
	Ընդամենը հողային աշխատանքներ				4,046,600.0
	Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0.00 նիշից ցածր				
9	Խամբարաբետոնե նախապատրաստական շերտի պատրաստում B -7,5 դասի բետոնով	խմ	465	35,000.0	16,275,000.0
10	Խամբարաբետոնե հիմքերի պատրաստում B-7 5 դասի բետոնով	խմ	10.5	45,000.0	472,500.0
11	Բետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-7,5դասի բետոնով	խմ	65	45,000.0	2,925,000.0
12	Շրջանակների միաձույլ ե/բետոնե հիմնային հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	335.65	70,000.0	23,495,500.0
13	Ամրան Փ8A240C	տն	8.242	360,000.0	2,967,084.0
14	Ամրան Փ16A500C	տն	6.197	350,000.0	2,168,915.0
15	Ամրան Փ18A500C	տն	5.509	350,000.0	1,928,010.0
16	Ամրան Փ25A500C	տն	0.115	350,000.0	40,320.0
17	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	5.1	70,000.0	357,000.0
18	Ամրան Փ8A240C	տն	0.510	360,000.0	183,600.0
19	Ամրան Փ22A500C	տն	1.742	350,000.0	609,700.0
20	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.232	650,000.0	150,865.0

21	Միաձույլ ե/բետոնե պատերի պատրաստում 350մմ հաստ. B-20 դասի բետոնով	խմ	198.95	70,000.0	13,926,500.0
22	Ամրան Փ6, 8A240C	տն	1.697	360,000.0	610,920.0
23	Ամրան Փ10A500C	տն	3.084	350,000.0	1,079,400.0
24	Ամրան Փ12A500C	տն	9.748	350,000.0	3,411,835.0
25	Ամրան Փ16A500C	տն	0.507	350,000.0	177,310.0
26	Ամրան Փ22A500C	տն	1.551	350,000.0	542,850.0
27	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.288	650,000.0	187,200.0
28	Բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	2.3	45,000.0	103,500.0
	Ընդամենը ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 կիլոգրամ				71,613,009.0
	Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 կիլոգրամ				
29	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	63.9	70,000.0	4,473,000.0
30	Ամրան Փ8A240C	տն	2.494	360,000.0	897,944.4
31	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0.131	350,000.0	45,850.0
32	Ամրան Փ22A500C	տն	7.452	350,000.0	2,608,340.0
33	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.01	650,000.0	6,760.0
34	Շրջանակների միաձույլ ե/բետոնե միջուկների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	0.500	70,000.0	35,000.0
35	Ամրան Փ8A240C	տն	0.023	360,000.0	8,424.0
36	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0.051	350,000.0	17,920.0
37	Շրջանակների միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում մինչև 500մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	6.80	70,000.0	476,000.0
38	Նույնը, մինչև 800մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	141.54	70,000.0	9,907,800.0
39	Ամրան Փ6, 8A240	տն	3.077	360,000.0	1,107,882.0
40	Ամրան Փ8A500C	տն	1.189	350,000.0	416,010.0
41	Ամրան Փ12A500C	տն	2.017	350,000.0	705,901.0
42	Ամրան Փ16A500C	տն	1.497	350,000.0	523,775.0
43	Ամրան Փ18A500C	տն	4.683	350,000.0	1,639,085.0
44	Ամրան Փ25A500C	տն	0.115	350,000.0	40,334.0
45	Ամրան Փ28A500C	տն	0.744	350,000.0	260,365.0
46	Պողպատե թերթից ներդիրների տեղադրում	տն	0.219	650,000.0	142,350.0
47	Միաձույլ ե/բ գոտիների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	29.21	70,000.0	2,044,700.0
48	Ամրան Փ6, 8A240	տն	0.605	360,000.0	217,706.4
49	Ամրան Փ12A500C	տն	1.601	350,000.0	560,280.0
50	Ամրան Փ18A500C	տն	0.180	350,000.0	63,000.0
51	Դիաֆրագմաների պատրաստում 200մմ հաստության սևամեջ բետոնե բլոկներով	խմ	162.78	25,000.0	4,069,600.0
52	Նույնի բետոնացում B-20 դասի բետոնով, ամրանավորումով	խմ	103.2	70,000.0	7,222,600.0
53	Ամրան Փ6, 8A240C	տն	0.634	360,000.0	228,373.2
54	Ամրան Փ10A500C	տն	8.935	350,000.0	3,127,215.0
55	Ամրան Փ12A500C	տն	7.859	350,000.0	2,750,685.0
56	Ամրան Փ16A500C	տն	1.175	350,000.0	411,320.0

57	Միաձույլ ե/բ բարավորների պատրաստում B-12,5 դասի բետոնով	խմ	1 91	55000	105,050.0
58	Ամրան Փ6A240	տն	0 058	360,000.0	20,880.0
59	Ամրան Փ12A500C	տն	0.246	350,000.0	86,100.0
60	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալերի պատրաստում +3,3նիշի վրա B-20դասի բետոնով	խմ	221.5	70,000.0	15,505,000.0
61	Ամրան Փ6A240	տն	0.415	360,000.0	149,256.0
62	Ամրան Փ12A500C	տն	19.457	350,000.0	6,809,950.0
63	Ամրան Փ14A500C	տն	5.474	350,000.0	1,915,795.0
64	Ամրան Փ18A500C	տն	0.013	350,000.0	4,550.0
65	Միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով ՄԳ-1 (6հատ)	խմ	6.80	70,000 0	476,000.0
66	Ամրան Փ8A240	տն	0.184	360,000.0	66,096.0
67	Ամրան Փ18A500C	տն	0.367	350,000.0	128,520 0
68	Միաձույլ ե/բ հովհարի պատրաստում +2,7նիշում B-20դասի բետոնով (սալ ՄՍ-1, +հեծան ՄԳ-1)	խմ	1.7	70,000.0	119,000.0
69	Ամրան Փ8A240	տն	0.029	360,000.0	10,332.0
70	Ամրան Փ8A500C	տն	0.073	350,000.0	25,480.0
71	Ամրան Փ12A500C	տն	0.008	350,000.0	2,800.0
72	Ամրան Փ16A500C	տն	0.046	350,000.0	16,100.0
73	Ամրան Փ18A500C	տն	0.015	350,000.0	5,250.0
74	ԱՍ-1 Աստիճանի միաձույլ ե/բետոնե սալի պատրաստում +0,45 դեպի +3,3նիշ B-20 դասի բետոնով	խմ	1.9	70,000.0	133,000.0
75	Նույնի, բետոնե աստիճանների պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	0.5	45000	22,500.0
76	Ամրան Փ8A240	տն	0.055	360,000.0	19,692.0
77	Ամրան Փ16A500C	տն	0.274	350,000.0	95,865.0
	Ընդամենը ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից բարձր				69,725,436.0
	Միջևորմներ				
78	Միջևորմների շարում 100մ հաստ. սնամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով)	քմ	397.58	4000	1,590,320.0
79	Միջևորմների շարում 200մ հաստության սնամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով)	խմ	142.3	25000	3,556,750.0
80	Ամրան Փ8A500C	տն	3.216	350,000.0	1,125,564.0
	Ընդամենը միջևորմներ				6,272,634.0
	Դռներ և պատուհաններ				
81	Այլումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն արտաին դռներ	քմ	36.31	75,000.0	2,723,070.0
82	Այլումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-5 արտաքին վիտրաժի բացվող մաս(դուռ)	քմ	1.92	70,000.0	134,400 0
83	Այլումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-4 արտաքին վիտրաժի բացվող մաս (պատուհան)	քմ	1 20	70,000.0	84,000 0
84	Այլումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-3-- V-5 արտաքին վիտրաժների չբացվող (խուլ) մաս	քմ	17 04	65,000.0	1,107,600.0
85	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ. ապակիով V-1 ներքին վիտրաժի բացվող մաս (դուռ)	քմ	2.30	40,000.0	92,160.0
86	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ. ապակիով V-1 ներքին վիտրաժի չբացվող (խուլ) մաս և V-2 խուլ վիտրաժ	քմ	25.0	35,000.0	876,050 0

87	Ներքին, ապակեպատ, երկգույնանի մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենտապոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԸ Դ-1	հատ	13	75,000.0	975,000.0
88	Ներքին, խուլ, մուգ մոխրագույն մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենտապոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԸ Դ-2---Դ-3	հատ	41	80,000.0	3,280,000.0
89	Ներքին երկփեղկանի դռներ (маятник петля)՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենտապոլիստիրոլ, երեսապատման շերտը 1.5մմ հաստությամբ ՊՎԸ Դ-4---Դ-4*	հատ	4	80,000.0	320,000.0
90	Մետաղական, խուլ, մուգ մոխրագույն դռան տեղադրում Դ-5	քմ	1.7	40,000.0	68,016.0
91	Մետաղական դռան երկշերտ յուղաներկում, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	քմ	3.4	1,800.0	6,120.0
92	Մետաղապլաստե ներքին դռներ Դ-6	քմ	5.3	38,000.0	199,606.4
93	Սանհանգույցի Էկրանների տեղադրում	քմ	12.6	20,000.0	252,000.0
94	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն բացվող պատուհաններ	քմ	100.1	35,000.0	3,503,850.0
95	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն չբացվող պատուհաններ	քմ	64.2	30,000.0	1,925,160.0
96	Մետաղապլաստե, բաց մոխրագույն, պատուհանագոգեղի տեղադրում 200մմ լայնությամբ	գծմ	86.2	6,000.0	517,320.0
	Ընդամենը դռներ և պատուհաններ				16,064,352.4
	Հատակներ				
97	Հողի տոփանում խճաքարով	քմ	1680	500.0	840,000.0
98	Ամրանավորված բետոնե շերտ 150մմ հաստությամբ B-12,5 դասի բետոնից	խմ	252.0	55,000.0	13,860,000.0
99	Նույնի ամրանավորում Փ10A500C դասի ամրանային ցանցով (8,3կգ/քմ)	տն	13.9	350,000.0	4,880,400.0
100	Խարամաբետոն 45մմ հաստ. B-12,5դասի թեթև բետոնով	քմ	1840.0	1,800.0	3,312,018.0
101	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում հզորից 1 շերտ. բիտումի մածկի վրա	քմ	1643.2	1,500.0	2,464,845.0
102	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	577.68	1,500.0	866,520.0
103	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստ.	քմ	1262.33	1,700.0	2,145,961.0
104	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սայերով հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	454.34	9,000.0	4,089,060.0
105	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սայերով աստիճանների երեսապատում	քմ	16.71	12,000.0	200,520.0
106	Նույնի, ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	16.71	1,500.0	25,065.0
107	Շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ մամլագրանիտե սայերով	գծմ	171.8	1,200.0	206,160.0
108	Խեցեխալերով (նվազագույնը 8մմ հաստ.) հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	123.34	9,000.0	1,110,060.0
109	Նույնի շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ	գծմ	80.1	1,200.0	96,108.0
110	Վինիլային (հետերոգեն ՊՎԸ 2մմ հաստ. 0,7մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցնող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80սմ շրիշակների մակերեսը)	քմ	934.7388	9,500.0	8,880,018.6

111	Վինիլային (հետերոգեն սպորտային ՊՎԶ 4,5մմ հաստ. 1մմ հաստ. հոմոգեն պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և տոնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=100մմ շրիշակների մակերեսը)	քմ	257.4352	13,500.0	3,475,375.2
112	Կավոլիինից (4,5մմ հաստ պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և տոնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	116.8	9,500.0	1,109,600.0
113	Ցեմենտե հատակների պատրաստում 30մմ հաստ (շրիշակների պատրաստումով)	քմ	34 32	2,300.0	78,936.0
Ուղղումներ հատակներ					47,640,646.8
Տանիք					
114	Ֆ-1 Մետաղական ֆերմաների մոնտաժում պողպատե քառակյան խողովակներից	տն	3.681	250,000.0	920,200.0
115	ՆԷ-6 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 250x250x10մմ, ամրան Փ12A500C)	տն	0.181	530,000.0	95,874.9
116	Մետաղական ֆերմաների կապերի մոնտաժում ուղղակյան պողպատե խողովակներից	տն	6 616	250,000.0	1,654,000.0
117	ՆԷ-7---ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 8մմ հաստ, ամրան Փ12A500C)	տն	0.198	530,000.0	104,929.4
118	Տանիքի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում պողպատե ուղղակյան խողովակներից (սյուներ, պարզունակներ)	տն	19.468	520,000.0	10,123,360.0
119	ՆԷ-7---ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ, անկյունակ, ամրան Փ8A500C)	տն	1.165	530,000.0	617,381.1
120	Մետաղական տարրերի երկշերտ ներկում ՌՓ-115 էմալով, Նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	31.309	40,000.0	1,252,341.8
121	Մետաղական մակերեսների պատում հրդեհակայուն ներկով	քմ	1329	2,500.0	3,323,673.0
122	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների տեղադրում, մշակված հակասեպտիկ նյութով (ծայր, կավարամած)	խմ	35.2	225,000.0	7,926,750.0
123	Նույնի երեսում (տակից) ОСП - սալերով (оринетированно-стружечная плита) 10մմ հաստ.	քմ	1749.19	4,000.0	6,996,760.0
124	Գուրշամեկուսիչ շերտի փոշում	քմ	1749.19	1,000.0	1,749,190.0
125	Ջերմամեկուսիչ շերտի իրականացում 100 մմ հաստ. երկշերտ (վերին շերտը 15մմ. ստորինը՝ 85մմ հաստ) չայրվող բազալտե հանքաքամբակե սալերով	քմ	1749.19	8,000.0	13,993,520.0
126	ОСП սալերի տեղադրում 10մմ հաստ. (քիտումային կղմինդրի հիմնատակ)	քմ	2019.7	4,000.0	8,078,800.0
127	Քիտումային կղմինդրից ծածկույթի իրականացում (մոդիֆիկացված քիտում 1,3կգ/քմ պարունակությամբ, երաշխիքային ժամկետը 40տարի)	քմ	2019.7	11,000.0	22,216,700.0
128	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում	խմ	35.2	25,000.0	880,750.0
129	ОСП սալի մասնակի լաքապատում	քմ	297.2	2,000.0	594,360 0
130	Ջրհորդանների պատրաստում 0.5մմ հաստ. ցինկապատ թիթեղից, գունավոր ներկվածքով	գծմ	156.9	4,500 0	706,050 0
131	Ջրոնդրուկի ձագարների տեղադրում Փ150մմ	հատ	19	15,000.0	285,000.0
132	Ջրոնս խողովակների տեղադրում 150x150մմ	գծմ	95.6	4,500.0	430,290.0
133	Էվակուացիոն աստիճանների մոնտաժում	տն	0.707	600,000.0	424,200.0
134	Նույնի երկշերտ ներկում ՌՓ-115 էմալով, Նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0 707	30,000.0	21,210.0
Ուղղումներ տանիք					82,395,340.3
Հարդարման աշխատանքներ					

135	Հարդարման աշխատանքներ Պատերի բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	2847 05	2,500.0	7,117,625.0
136	Պատերի բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	313.02	2,500.0	782,550.0
137	Դռների եւ պատուհանների շեպերի սվաղ գաջի շաղախով	քմ	10.13	2,500.0	25,330.0
138	V-2, V-4, V-5 վիտրամների վերնի մասի լցափակում գիպտկարտոնե հարթասալերով	քմ	12.9	3,500.0	45,150.0
139	Առաստաղների բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	1051 08	2,500.0	2,627,700 0
140	Առաստաղների բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	98.22	2,500.0	245,550.0
141	Պատերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	2879.0	2,000.0	5,758,004 0
142	Պատերի բարելավված ներկում լատեքսային ներկով	քմ	313.02	2,000 0	626,040.0
143	Առաստաղների բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	1512.81	2,000.0	3,025,620 0
144	Առաստաղների բարելավված ներկում լատեքսային ներկով	քմ	43.04	2,000.0	86,080.0
145	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	քմ	364.66	2,500.0	911,650.0
146	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով	քմ	307 56	10,000.0	3,075,600.0
147	Կախովի առաստաղ գիպսասովարաթոթ հարթասալերով 9.5մմ հաստության, ստատների տեղադրումով	քմ	461.73	3,500.0	1,616,055.0
148	Ներքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում	քմ հորիզոն ական	332	1,000.0	332,000.0
149	Կախովի առաստաղների պատրաստում պլաստիկ սալերով САЙДИНГ	քմ	55.18	4,500.0	248,310.0
150	Ողղանկյուն պողպատե խողովակներից բազրիքների մոնտաժում	տն	0.593	500,000.0	296,436.0
151	Նույնի երկշերտ ներկում ՌՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.593	30,000.0	17,786.2
Ընդամենը հարդարման աշխատանքներ					26,837,486.2
Արտաքին աստիճաններ, թեքահարթակներ					
152	Խամբարե զանգվածի պատրաստում աստիճանների տակ	խմ	17	3,000.0	51,000.0
153	Միածույլ բետոնե պատերի պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	9.6	40,000.0	384,000.0
154	Բետոնե աստիճանների պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	9.4	40,000.0	376,000.0
155	Աստիճանների երեսապատում 50մմ հաստ. բազալտե սալերով	քմ	13.2	18,000.0	237,600.0
156	Հարթակների և աստիճանաճակատների երեսապատում 30մմ հաստ. բազալտե սալերով	քմ	55.2	14,000.0	772,800.0
157	Խամբարե զանգվածի պատրաստում թեքահարթակների տակ	խմ	11	15,000.0	165,000.0
158	Նույնի, միածույլ բետոնե ծածկույթի պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	3.5	45,000.0	157,500.0
159	Թեքահարթակի միածույլ բետոնե պատերի պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	4	40,000.0	160,000.0
160	Նույնի, միածույլ ե/բետոնե բազրիքների պատրաստում 120մմ հաստության B-12,5 դասի բետոնով	խմ	1.5	55,000.0	82,500.0
161	Ամրան Փ10A500C	տն	0.13	350,000.0	45,500.0
162	60x40x3մմ պողպատե ուղղանկյուն խողովակներից բռնածող	տն	0.104	540,000.0	56,057.4
163	Նույնի երկշերտ ներկում ՌՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.104	30,000.0	3,114.3
Ընդամենը արտաքին աստիճաններ և թեքահարթակներ					2,491,071.7

	Արտաքին հարդարում				
164	Պատերի ջեռամեկուսացում արտաքինից 100մ հաստ. երկշերտ (վերին շերտը 30մմ. ստորինը 70մմ հաստ.) բազալտե մանրաթելային սալերով	քմ	1411.6	5,000.0	7,058,000.0
165	V-4, V-5 արտաքին վիտրամների վերևի մասի երեսապատում այլումինե "Alukobond" թիթեղով	քմ	3.5	28,000.0	98,000.0
166	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտի շաղախով մետաղացանցի տեղադրումով	քմ	1302.36	3,500.0	4,558,260.0
167	Նույնի բարձրորակ ներկում դեկորատիվ, բաց գույնի, ճակատային ներկով	քմ	1302.40	2,500.0	3,256,000.0
168	Պատերի երեսապատում բազալտե սալերով 30մմ հաստ. խարսխումով	քմ	176.0	15,000.0	2,640,000.0
169	Պատուհանագոգերի տեղադրում բազալտե սալերից 30մմ հաստ. 150մմ լայնությ.	քմ	13.61	15,000.0	204,075.0
170	Բացվածքների լցափակում ապակեբլոկներով	քմ	0.96	300,000.0	288,000.0
171	Արտաքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում հարդարման աշխատանքների համար	քմ ուղ. պրոեկց.	523	1,000.0	523,000.0
	Ընդամենը արտաքին հարդարում				18,625,335.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 1.1 Համաշինարարական նշխանանքներ				345,711,911.3
	Ամբարձիչ				
174	Պոտոտակային, ապակեպատ ամբարձիչ հաշմանդամ երեխաների համար 320կգ բեռնունակությամբ FORSTOR կամ համարժեք	հատ	1	2,700,000.0	2,700,000.0
	ԸՆԴԱՄԵՆԸ Ամբարձիչ				2,700,000.0
	1.2 Ձեռնոցում				
1	Ալյումինե ջեռուցման սարքերի տեղադրում h=500մմ	սեկց	596	7,000.0	4,172,000.0
2	Ալյումինե ջեռուցման սարքերի տեղադրում h=350մմ	սեկց	38	5,000.0	190,000.0
3	Ջեռմակարգավորիչ փական Φ20մմ	հատ	41	8,000.0	328,000.0
4	Ջեռմակարգավորիչ փական Φ25մմ	հատ	10	10,000.0	100,000.0
5	Փական անցումային Φ20մմ	հատ	45	1,000.0	45,000.0
6	Փական անցումային Φ25մմ	հատ	10	1,200.0	12,000.0
7	Ավտոմատ օդահան փական Φ15մմ	հատ	51	5,000.0	255,000.0
8	Պոլիարոպիլենային խողովակների տեղադրում, փորձարկումով և կցամասերի տեղադրումով PN10 Φ20x2,8մմ	զծմ	236	2,500.0	590,000.0
9	Նույնը, Φ25x3,5մմ	զծմ	240	1,800.0	432,000.0
10	Նույնը, Φ32x4,5մմ	զծմ	102	2,000.0	204,000.0
11	Նույնը, Φ40x5,6մմ	զծմ	150	3,000.0	450,000.0
12	Նույնը, Φ50x6,9մմ	զծմ	258	3,200.0	825,600.0
13	Պոլիարոպիլենային անկյունակ 90° Φ20մմ	հատ	139	800.0	111,200.0
14	Նույնը, Φ25մմ	հատ	61	900.0	54,900.0
15	Նույնը, Φ32մմ	հատ	73	1,000.0	73,000.0
16	Նույնը, Φ40մմ	հատ	60	1,200.0	72,000.0
17	Նույնը, Φ50մմ	հատ	102	1,500.0	153,000.0
18	Պոլիարոպիլենային անկյունակ 45° Φ20մմ	հատ	4	2,000.0	8,000.0
19	Նույնը, Φ25մմ	հատ	6	1,000.0	6,000.0
20	Նույնը, Φ32մմ	հատ	2	1,200.0	2,400.0
21	Նույնը, Φ40մմ	հատ	2	1,700.0	3,400.0
22	Նույնը, Φ50մմ	հատ	6	2,000.0	12,000.0
23	Պոլիարոպիլենային եռաբաշխիչ Φ20x20x20մմ	հատ	11	1,500.0	16,500.0

24	Նույնը, $\Phi 20 \times 20 \times 25$ մմ	հատ	4	1,500.0	6,000.0
25	Նույնը, $\Phi 25 \times 20 \times 25$ մմ	հատ	9	1,600.0	14,400.0
26	Նույնը, $\Phi 25 \times 20 \times 32$ մմ	հատ	3	1,800.0	5,400.0
27	Նույնը, $\Phi 25 \times 25 \times 32$ մմ	հատ	1	2,000.0	2,000.0
28	Նույնը, $\Phi 32 \times 20 \times 32$ մմ	հատ	15	2,000.0	30,000.0
29	Նույնը, $\Phi 32 \times 20 \times 40$ մմ	հատ	3	2,200.0	6,600.0
30	Նույնը, $\Phi 32 \times 25 \times 32$ մմ	հատ	2	2,200.0	4,400.0
31	Նույնը, $\Phi 40 \times 20 \times 40$ մմ	հատ	12	2,300.0	27,600.0
32	Նույնը, $\Phi 40 \times 20 \times 50$ մմ	հատ	3	2,500.0	7,500.0
33	Նույնը, $\Phi 40 \times 25 \times 40$ մմ	հատ	8	2,500.0	20,000.0
34	Նույնը, $\Phi 40 \times 25 \times 50$ մմ	հատ	1	2,300.0	2,300.0
35	Նույնը, $\Phi 50 \times 20 \times 50$ մմ	հատ	25	2,400.0	60,000.0
36	Նույնը, $\Phi 50 \times 25 \times 50$ մմ	հատ	2	2,000.0	4,000.0
37	Շրջանցիկ ծունկ $\Phi 20$ մմ	հատ	42	1,500.0	63,000.0
38	Նույնը, $\Phi 25$ մմ	հատ	9	1,500.0	13,500.0
39	Նույնը, $\Phi 40$ մմ	հատ	1	2,000.0	2,000.0
40	$\Phi 20 \times 2.8$ մմ խողովակների ջերմամեկուսացում ռետինե մեկուսիչով $\delta=10$ մմ	մ	20	500.0	10,000.0
41	Նույնը, $\Phi 25 \times 3.5$ մմ խողովակների	մ	64	550.0	35,200.0
42	Նույնը, $\Phi 32 \times 4.5$ մմ խողովակների	մ	18	600.0	10,800.0
43	Նույնը, $\Phi 40 \times 5.6$ մմ խողովակների	մ	13	700.0	9,100.0
44	Նույնը, $\Phi 50 \times 6.9$ մմ խողովակների	մ	98	800.0	78,400.0
45	Մետաղ ռադիատորների և խողովակների ամրացման համար	կգ	130	1,500.0	195,000.0
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 1.2 Ձեռուցում					8,723,200.0
1.3 Օդափոխություն					
1	Ներածման-արտածման սարք, Lն=3600խմ/ժամ, Lա=3200խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի և ելքի վրա 2) օդատաքացուցիչ ՕՏ=31.2կՎտ 3) օդի պտտվող ռեկուպերատոր 4) օդամղիչ ներածման Lն=3600մ3/ժամ 5) օդամղիչ արտածման Lա=3200մ3/ժամ, 6) աղմկախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10) ավտոմատիկայի կոմպլեկտ	կ-տ	1	5,000,000.0	5,000,000.0

2	Ներածման-արտածման սարք, L=2400իսմ/ժամ, Lw=2400իսմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի և ելքի վրա 2) օդատաքացուցիչ ՕՏ=19,8կՎտ 3) օդի պտտվող ռեկուպերատոր 4) օդամղիչ Ներածման L=2400մ3/ժամ 5) օդամղիչ արտածման L=2400մ3/ժամ, 6) ձայնախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն Ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10) ավտոմատիկայի կոմպլեկտ	կ-տ	1	4,000,000.0	4,000,000 0
3	Ներածման-արտածման սարք, L=7165իսմ/ժամ, Lw=6140իսմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի և ելքի վրա 2) օդատաքացուցիչ ՕՏ=58,8կՎտ 3) օդի պտտվող ռեկուպերատոր 4) օդամղիչ Ներածման L=5885մ3/ժամ 5) օդամղիչ արտածման L=4860մ3/ժամ, 6) ձայնախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն Ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10) ավտոմատիկայի կոմպլեկտ	կ-տ	1	5,000,000.0	5,000,000.0
4	Ներածման սարք, L=1820իսմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի վրա 2) օդատաքացուցիչ ՕՏ=15կՎտ 3) օդամղիչ Ներածման L=1820մ3/ժամ 4) ձայնախլացուցիչ 5) օդի կարգավորիչ փական մուտքի վրա 6) ճկուն Ներդիրներ 7) ավտոմատիկայի կոմպլեկտ	կ-տ	1	2,800,000.0	2,800,000.0
5	Օդափոխիչ կանալային L=540իսմ/ժամ P=200Պա N=0,8կՎտ	հատ	1	100,000 0	100,000.0
6	Օդափոխիչ կանալային L=275իսմ/ժամ P=100Պա N=0,7կՎտ	հատ	1	25,000.0	25,000.0
7	Օդափոխիչ կանալային L=100իսմ/ժամ P=100Պա N=0,5կՎտ	հատ	2	15,000.0	30,000.0
8	Օդափոխիչ կանալային L=325իսմ/ժամ P=100Պա N=0,7կՎտ	հատ	1	40,000.0	40,000.0
9	Օդափոխիչ կանալային L=800իսմ/ժամ P=220Պա N=0,8կՎտ	հատ	1	75,000.0	75,000.0
10	Ճաղաշար պլաստմասայից Φ200մմ	հատ	20	2,000.0	40,000.0
11	Նույնը 200x200	հատ	3	1,000 0	3,000.0
12	Նույնը 300x300	հատ	14	1,000.0	14,000.0
13	Նույնը 350x350	հատ	18	1,500.0	27,000.0
